

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԿՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԴՐԱՄԱՐԿՂ "այսուհետ՝ Փ.Վ.Դ"

Հանընդհանուր կոնցեպցիա կանոնակարգված մասնագիտության համար

1/ Ենթակետ

Փողերի լվացումը քայքայում է տնտեսությունը, պետությունները, Պայքարում են դրա դեմ՝ փորձելով պաշտպանել ժողովրդավարական նորմերը և ազատությունները: Հսկողությունը իրականացնելու նպատակով պետությունները բարելավում են իրենց օրենսդրությունը, դրա համար ընդգրկելով բազմաթիվ մասնագիտություններ:

Փողերի լվացման կասկածի դեպքում, եվրոպական իրավունքի նորմերը պարտավորեցնում են բոլոր իրավաբաններին, այդ թվում փաստաբաններին, կատարել համապատասխան հայտարարություն:

Նկատի ունենալով, որ փողերի լվացման դեմ պայքարի հետ կապված պահնջները հակադրվում են փաստաբանի մասնագիտական գաղտնիքի սկզբունքին, դրամարկղը այդ հսկողության լուծման ձևերից մեկն է:

2/ Փ.Վ.Դ-ի կոնցեպցիան

Կոնցեպցիան հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա

ա/ հաշվի է առնում փաստաբանական գործունեության առանձնահատկությունները

բ/ ենթակա է մասնագիտական վերադաս կազմակերպությանը

գ/ Փ.Վ.Դ-ն պարտադիր է բոլոր փաստաբանների համար

դ/ մշակում է իրավականոններ

ե/ կիրառում է համապատասխան պատժամիջոցներ

Այդ կոնցեպցիան հնարավոր է կիրառել բոլոր երկրներում:

3/ Փ.Վ.Դ-ի դերը

Ցուրաքանչյուր փաստաբան պարտավոր է տրամադրել տվյալների այդ կառույցին իանձնված գումարների ստացման աղբյուրի մասին:

Դրամարկղի կողմից նախնական գումարների ստուգումները ոչ պարբերաբար են կատարվում:

Դրանք հաճախակի են դառնում կապված գումարի չափից:

Ստուգումները պարտադիր են, եթե ֆինանսավորման աղբյուրը այլ երկրից է:

Դրամական միջոցների տեղաշարժի հսկողությունը պետք է պատասխանի հետևյալ հարցերին՝

ա/ ֆինանսավորողը

բ/ ստացողը

գ/ նպատակը

4/ Դրամարկղի հարաբերությունը այլ ֆինանսական մարմինների հետ

Դրամարկղը ոչ բանկ է, ոչ ֆինանսական մրմին: Հաճախորդների համար փաստաբանից ստացված գումարը Դրամարկղը փոխանցում է ֆինանսական մարմնում բացված հատուկ հաշվին.

Դրամարկղի կատարած ստուգումները վերաբերում են փաստաբանի գործունեությանը և չեն խոչընդոտում որպեսզի բանկերը, իրենց հերթին այքարեն փողերի լվացման դեմ:

5/ Դրամարկղի հաշվապահական կարգավորումը

Հաշվապահությունում յուրաքանչյուր փաստաբանի անունով առկա է առանձին հաշիվ, որտեղ գրանցվում է յուրաքանչյուր գործով ստացված գումարի տեղաշարժը:

Դրամարկղը ունի հատուկ մշակված ինֆորմատիկ ծրագիր, որը կատարում է ստուգումները և անհրաժեշտության դեպքում ահազանգում կասկածելի տվյալների մասին:

6/ Դրամարկղի և փաստաբանի միջև կապը:

Բավարար տվյալները չստանալու դեպքում կառույցը կարող է արգելակել բոլոր տեսակի բանկային գործարքները:

Եթե խախտումները կրում են շարունակական բնույթ, կառույցին իրավունք է վերապահված դիմել համապատասխան կարգապահական մարմնին:

Միայն համապատասխան ստուգումների կատարելուց հետո կառույցը փոխանցում է գումարը հասցեատիրոջը՝ համաձայնեցնելով փաստաթանի հետ, որը իր ստորագրությամբ հաստատում է գործարքի իսկությունը:

7/ Փաստաթանի հաճախորդի անվտանգությունը

Հաճախորդը տեղեկացված է, որ իր կողմից վճարված գումարը փոխանցվում է անձնական գործի համար, հատկապես՝ ապահովագրում է փոխանցված գումարները՝ դրանք բաշխելով բոլոր փաստաթանների միջև:

Կառույցը հանդես է գալիս երաշխավորի դերում, հավաստիացնելով հասցեատիրոջը, որ վճարումը պարտադիր կկատարվի:

Պարտապանը և պահանջատերը վստահ են, որ իրենց անձնական բանկային տվյալները գաղտնի են և արտահոսք չի լինելու:

Որոշակի իրավապահ մարմիններին իրավունք է վերապահված հարցումներ կատարել կառույցին՝ ստացված գումարների վերաբերյալ:

Կառույցի միջոցով հնարավոր է ճշտել վճարված գումարների տեղաշարժը:

Կառույցի շնորհիվ փաստաթանը կարող է վստահեցնել փոխանցման հուսալիությունը և անվտանգությունը:

Փոխանցված գումարը տեղական ժամկետով չի կարող մնալ բանկային հաշվում:

Հաճախորդի կողմից կանխիկ գումար վճարելու դեպքում՝ փաստաթանը հաճախորդի ինքնության վերաբերյալ տվյալները տրամադրում է բանկին՝ ստուգումներ անցկացնելու համար:

8/ Կառույցի ֆինանսավորումը

Դրամարկի ֆինանսական միջոցները գոյանում են ներդրված գումարների հաշվին և ստացված եկամուտները /տոկոսադուրոյություն/ օգտագործվում են բոլոր նպատակային ծախսերի համար:

Եկամուտները կարող են ծախսվել նաև արդարադատության իրականացման համար:

9/ Հսկողությունը Դրամարկի նկատմամբ

Դրամարկի նկատմամբ հսկողությունը կարող է իրականացվել տարբեր ձևերով համապատասխան իրավասու մարմինների կողմից, որոնք կարող են ստեղծել հանձնաժողովներ, այդ թվում ֆինանսական, կարգապահական:

Առկա տեղեկատվության հիման վրա Դրամարկը պարբերաբար հաշվետվություն է ներկայացնում իրավասու մարմիններին, ընդհուպ՝ պետական բարձրագույն մարմիններին:

10/ Այլ Ծառայություններ

Բացի հիմնական գործունեությունից.

Դրամարկը կազմակերպում է պետական իրաքվական օգնության նպատկով տրամադրվող միջոցների տեղաբաշխումը, ինչպես նաև երաշխավորական գումարների մուտքագրումը մինչև գործարքի ավարտը:

Իր գործունեության 50 տարիների ընթացքում, Փ.Վ.Դ-ն մշտապես կատարելագործել է աշխատանքի կազմակերպման ձևերը, միջոցները և մեխանիզմները: